Արձանագրություն N 2
«ՏԿՏՏՆ-ՀԲՄԱՇՁԲ-2019/4Շ» ծածկագրով հրատապ բաց մրցույթ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«29» ապրիլի 2019թ.
ժամը 15:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Կ. Գասպարյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Ն. Մեսրոպյանը, Ա. Պապյանը,
Լ. Հարությունյանը, Լ. Ոսկանյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Պետրոսյանը

<<ՏԿՏՏՆ-ՀԲՄԱՇՁԲ-2019/4Շ>> ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին
(Կ. Գասպարյանը)

<<ՏԿՏՏՆ-ՀԲՄԱՇՁԲ-2019/4Շ>> ծածկագրով գնման ընթացակարգի 3-րդ չափաբաժնով նախատեսված Մ-4, Երևան - Սևան - Իջևան - Ադրբեջանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ67+240- կմ72+200 աջակողմյան և ձախակողմյան հատվածների և կմ72+200 – կմ73+183 հատվածի միջին նորոգման ծավալաթերթ-նախահաշիվներում տեղի ունեցած վրիպակների հետևանքով 3-րդ չափաբաժնի ծավալաթերթ-նախահաշիվներում աշխատանքների քանակները չեն նշվել, որի արդյունքում 3-րդ չափաբաժնի մասով առաջացել են գումարային անհամապատասխանություններ: Նշված խնդրի վերաբերյալ հրավերի հնարավոր մասնակցի կողմից կատարվել է հարցում, որին տրվել է պարզաբանում: Պարզաբանման մեջ նշվել է, որ հարցմամբ նշված դիտարկումը ընդունելի է պատվիրատուի կողմից:

29.04.2019թ. պատասխանատու ստորաբաժանման կողմից տրվել է հայտը <<ՏԿՏՏՆ-ՀԲՄԱՇՁԲ-2019/4Շ>> ծածկագրով գնման ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով փոփոխություններ կատարելու համար՝ կից ներկայացնելով 3-րդ չափաբաժնի գնման առարկայի պահանջվող ծավալը և մեկ միավորի ձեռքբերման համար նախատեսված առավելագույն գինը:

<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ հրավերում կարող են կատարվել փոփոխություններ:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ <<ՏԿՏՏՆ-ՀԲՄԱՇՁԲ-2019/4Շ>> ծածկագրով գնման ընթացակարգում այլևս հնարավոր չէ փոփոխություններ կատարել, իսկ հրավերում առկա նմանատիպ սխալի արդյունքում հրարավոր չէ նշված չափաբաժնի մասով շարունակել գնման ընթացակարգը, ուստի գնահատող հանձնաժողովը որոշեց <<ՏԿՏՏՆ-ՀԲՄԱՇՁԲ-2019/4Շ>> ծածկագրով գնման ընթացակարգը 3-րդ /երրորդ/ չափաբաժնի մասով հայտարարել չկայացած:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Կ. Գասպարյան

Անդամներ՝ _____ Ա. Պապյան

_____ Ն Մեսրոպյան

_____ Լ. Հարությունյան

_____ Լ. Ոսկանյան

Քարտուղար՝ _____ Ա. Պետրոսյան

Scanned by CamScanner